

նէր: 1744ին ի Հռոմ՝ կաթուղիկէ վարդապետութեանց պաշտպան գիրք մ'ընդօրինակել տուած է Վրթանէս Արքեպ. (Մտղրն. Անտ. Թիւ ՄԽԹ.): Վախճանած է ի Հռոմ 3 Մարտ 1761ին 100 տարեկան, եւ թաղուած յեկեղեցւոջ Հայոց Ս. Մարիամ Եգիպտացւոյ: Շիրմին վրայ գրուած էր հետեւեալ տապանագիրը, յօրինուած Կ. Պոլսեցի Հ. Մկրտիչ Անանեան Մխիթարեան վ. է (Տաշեան, 460բ եւ 470բ, ուր կայ նոյն հաղինակէն միեւնոյն անձին համար շինուած ուրիշ տապանագիր մ'ալ, որ չէ գործածուած: ) Նոյն Անանեան վ. շինած է նաեւ Երանելի Տեառն Կոմիտասայ (նահատակեալ 1707ին) տապանագիրն, Կ. Պոլիս, ի գերեզմանոցի Պալլաքլըյի (Տաշեան, 470), վրիպած Հ. Յովհ. Թորոսեանի ուշագրութենէն, ի վարս Մխիթարայ, վննեա. 1901 էջ 231: )

Տ-դ-ն-դ-ի-ր Վ-ր-ն-յ Ա-ր-ե-դ-է-հ-դ-է-ն Կ-ե-ր-ց-ո-յ  
 ՏԱՊԱՆ ԿԵՍԱՐԵԱՆ ԱՌԸՆ, ՊԱՐԹԵԻԻ.  
 ԿԱՊԱԿՈՎԿԻՈՅ ՔԱԶԸՆԹԱՅ ՀՈՎՈՒԻ.  
 ՎՐԹԱՆԷՒ ԱՆՈՒՆ ՎԱՐԿԱՊԵՏ ԱՐՀԻ.  
 ՊԵՏՐՈՍԵԱՆ ԳԱՀԻՍ ԶԱՏԱԳՈՎ ԱՐԻ:

ՊԱՏՈՒՈՅ ԵՒ ԸՆԶԻՑ ԵՂԵՒ ԱՆԱՐԿԻԶ.  
 ԲԵՐՈՒՔ ՎԵՀԱՆԶՆԵԱՅ ԳԹԱԾ ԵՒ ՏՈՒԻԶ.  
 ԵԿԵԱԼ Ի ՀՈՕՄ ՈՒՆՏԻ ԿԱՏԱՐԻԶ.  
 ԿԱՐԳԵՑԱՒ ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ԶԵՌՆԱԳՐԻԶ:  
 ՅԱՅՍ ՎԱՆԸՍ՝ ԿԱՅԵԱԼ ԱՄԸՍ ՔԱՌԱՍՈՒՆ.

: «Այսինքն՝ ի վանս Հայոց սրբոյն Մարիամու Եգիպտացւոյն որ ի Հռոմ:» Ծան. գրչին առ Տաշեան, անդ: